Սեյրի

4252

Պերճանի աշխատություններ

891.99 ս
Ս-39

Թիֆլիս

1913

528

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«ՀԻՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

2

ՍԷՅՐԻ

ԴԵՐԶԱԿԻ ԱՇԱԿԵՐՏԸ

Մանկական վոլրիկ մէկ գործողութեամբ

Զրի յաւելած «Հասկերի»

891.99ՄՄ
Ս-39

ԹԻՖԼԻՍ
Էրէկա. Օր. Ն. Աղամեանցի, Պօլից. 7
1913

2004

Հրատարակութիւն «ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»
Ընկերութեան № 2.

891.99(ս)-2 Ս Է Յ Ր Ի
Ս-39

ԴԵՐԶԱԿԻ ԱՇԱԿԵՐՏԸ

Մանկական վոդեվիլ մէկ գործողութեամբ

1002/6372

Զրի յաւելուած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Գ. Գ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլէֆտրատպ. օր. Ն. Ադամեանցի, Պօլից 7.
1913

5218

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԽՍՀ, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԶԳ. ԱՐԵՎԱԼԱՆ

ԴԵՐՁԱԿԻ ԱՇԱԿԵՐՏԸ

Մանկական վոդբվկ մէկ գործողութեամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Վարպետ Միկիչ—դերձակ, միջահասակ, ածիլած, կարմրաթուշ մարդ. հագին պիջակ-ժիլէտ՝ չէ-սու-չա շապկով. գլխին ֆուրաշկա գլխարկ չէ-սու-չայից . . . . . մօտ 40 տար.

Սաքի—վարպետի աշակերտը, գիւղացի տղայ՝ խոշոր կազմով, հագին մաշած, իր վրայով մեծ պիջակ, գլխաբաց . . . . . 13 տար.

Սեղրակ—նոյնպէս վարպետի աշակերտը, վոտա մի տղայ՝ հագին բծաւոր չթէ շապիկ, մաշած, նեղ գօտի, գլխաբաց . . . . . 12 տար.

Սիմ՚օն—սափրիչի աշակերտ՝ շապկով ու մէջքը սեղմած մի թելով . . . . . 12 տար.

Մօթալ—խոհարարի ծառայ՝ հաստաթուշ մի տղայ՝ առջևում կապած սպիտակ, կեղտոտ գոգնոց, գլխին մօթալ փոփախ՝ մազերը կախ կախ . . . . . 14 տար.

Զարօ—վարպետի քրոջ աղջիկը՝ թեթև ամառուայ զգեստով, սիրուն կօշիկներով, սպիտակ գուլպաներով . . . . . 10 տար.

Ներիտասարդ յաճախորդ — բարձրահասակ, մաքուր հագնուած և բարեկիրթ . . . . —

Գիմնազիստ—հագին նեղ, կոկիկ բլուզ, գօտին կապած, սպիտակ գլխարկով . . . 15—16 տար.

Գործակատար— երիտասարդ, միջահասակ, հասարակ հագնուած, գլխին սև գլխարկ —
Մի տղայ—աշակերտ՝ հագին բլուզ . . . 8 տար.

Բեմը ներկայացնում է դերձակի խանութ։ Աջ կողմում երկար «դեազգեահը», վրան՝ հագուստացու կտորներ, որոնց առաջ՝ ձեւի մեծ մկրատը։ Միւս ծայրին՝ արդուկի մեծ և փոքր բարձիկները, մեծ, հաստ տախտակը և արդուկը՝ արդուկակալի վրա։ Աջ պատի վրա կախուած են մի-երկու կարած վերջացրած և մի-երկու էլ չվերջացրած հագուստներ։ Նոյնպէս և մի փայտէ լայն արշին ու սանտիմէտը։ Միւս պատին՝ մեծ հայելի, պատի տակ՝ փոքրիկ թախտ՝ ծածկուած փալասով։ Այս ու այն տեղ շորի ու թելի մանր կտորտանք։ Դուռը—դիմացի պատին՝ բացուում է փողոցում՝ մայթի վրա։ Երևում են մայթով երթևեկող կանայք, տղամարդիկ և երեխաներ։ Ցերեկւայ ժամի մօտ 1-ն է։

ՏԵՍԱՐԱՆ I.

ՍԱՔԻ ԵՒ ՍԵԴՐԱԿ

(Վարագոյրը բարձրանալիս, Սաքին դեազգեահի վրա խոզանակը թրջելով ամանով հեղուկի մէջ, ղէմքը թթուած, պինդ-պինդ մաքրում է մի պիջակի օձիքը։ Սեդրակը պառկած թախտին՝ նրա լայնութեամբ, ոտները տնկել է պատին—բարձր, մաստակ է ծամում եւ հետն էլ նաու, նաու՝ ինչ որ երգում է՝ ձեռքին ծուլօրէն քանդելով մի կար)։

ՍԵԴՐԱԿ. Քաղցած եմ... (պառզա)։ Սաքի, դու քաղցած չէս (Սաքին լուռ սրբում է)։ Ի՞նչ էս սուս կացել, տօ անշնորհք... Մի շալւար էս էրել էլի, հօ մի մեծ բան չի...

ՍԱՔԻ. (վիրաւորուած) Վարպետն ինձ վատ խօսքեր ասաւ...

ՍԵԴՐԱԿ. Օ՜, օ, օ, մի սրան տեսէք... Դու հալա արշինի շրբխկոցը չէս կերել...

ՍԱՔԻ. (բարկացած) Արշին... Մի օր էլ չեմ ճնայ, խկոյն կը փախչեմ...

ՍԵԴՐԱԿ. Կը փախչես... վզակոթիդ տալով կը բերեն... Էս ձեր գեղը չի...

ՏԵՍԱՐԱՆ II.

ՆՐԱՆՔ ԵՒ ԶԱՐՕ

(Վազելով ներս է ընկնում Զարօն՝ թովուան մի աղջիկ։ Սեղրակը լռում, վայրկենապէս ցած է դերում ոտները, մաստակն արագ կոխում է ազդրի տակ եւ շտապ-շտապ քանդում կարը)։

ԶԱՐՕ. (Սեղրակին բարկացած) Ի՞նչ էիր ոտներդ չարդախ արել... Էնքան քեզ ծեծում են, էլի չես ամաչում։ (Սեղրակը կեղծ ամօթահարում ու տակամանց ժպտում է). Անպիտան... (Ապա Սաքիին՝ քաղցր) Էտ ի՞նչ ես անում... սրբում ես... տուր մի քիչ էլ ես սրբեմ (խլում է խոզանակն ու պիջակը եւ սկսում է արագ-արագ սրբել։ Ցանկարծ ձեռքը դիպչում է ամանի ջրին)։

ՍԱՔԻ. (շտապ բռնելով ամանը ու բարկացած) Դու էլ ի՞նչ ես անում... Թող...

ԶԱՐՕ. (նետելով խոզանակը եւ ետ-ետ գը-

նալով) Ա՛ռ, ա՛ռ... ես չեմ կարող, չեմ կարող... (անհանգիստ խաղերը է անում)։

ՍԱՔԻ. (մի լաթով սրբելով ջուրը դեռազգեստի վրա) Հիմի վարպետն էլ կը գայ կը բարկանայ...

ԶԱՐՈ. Հա՛, ո՞րտեղ է քեռիս, մայրիկս մի բողբոջով կանչում է...

ՍԱՔԻ. (քիչ լռելուց յետոյ) Գնաց...

ԶԱՐՈ. Ո՞րտեղ...

ՍԱՔԻ. Ուրիշ տեղ... (սկսում է թոյլ-թոյլ սրբել ու լսել Սեդրակին)։

ՍԵԴՐԱԿ. (լրացնելով) Գնացել է հարևան սափրիչի խանութը... Սաքին մուշտարու շալաբը գցեց տաք ութոյի վրա ու էրեց. տարել է էնտեղ կարի, որ տերը յանկարծ չգայ տեսնի։

ԶԱՐՈ. (քիչ վախեցած) Սաքի, ճի՞շտ... Դրա համար էտպէս քինթ ու պռունկդ կախել ես... Մի վախենայ, իմ քեռին բան չի ասի...

ՍԵԴՐԱԿ. Ես ասում եմ, չի հաւատում... Ուստէն հիմի էնպէս կը կարի, որ սատանան էլ բան չի հասկանայ...

ԶԱՐՈ. Ի հարկէ, ի հարկէ, սատանան էլ բան չի հասկանայ... Մի՛ վախենայ... (ուրախ) Գիտե՞ս, նա քեզ շատ է սիրում... ասում է՝ լաւ վարպետ պիտի դարձնեմ... Շատ շագիրդանա սատանում ես...

ՍԵԴՐԱԿ. (տեղից թռչելով) Ի հարկէ շատ է սատանում... (հեգնելով). Ինքն ասում է՝ էնքան պիտի շատացնեմ փողերս, որ երբ ուստա

դառնամ, նրանով խանութ բանամ... (վազելով հանում է դեռազգեստի տակից շագիրդանի բուլիկն ու զիզիկացնելով) Տես՝ ինչքան է հաւաքել։

ԶԱՐՈ. (առնելով բուլիկն ու զիզիկացնելով) Իսկապէս, ինչքան շատ ես հաւաքել։

ՍԵԴՐԱԿ. Ապա (նստում, էլի կարն է քանդում)։

ՍԱՔԻ. (քիչ ուրախացած) Բոլոր յաճախորդներն ինձ տալիս են շագիրդանա...

ԶԱՐՈ. Ի հարկէ կը տան, դու լաւ տղայ ես... Դու շատ լաւ տղայ ես, մայրիկս էլ է ասում... (խօսքը փոխելով) Կիրակի օրը կը գաս մեր տանը խաղանք, մեծ քոյրս—Մաշօն էլ ասում էր՝ եկ։

ՍԱՔԻՆ (լուռ է)։

ԶԱՐՈ. Գիտես, անպատճառ եկ. շուտ էլ բեր հետդ, որ ածես... Հա՛, կը գաս... մեր բոլոր հարևաններն ասում են, որ դու շատ լաւ շուտ ես ածում...

ՍԱՔԻ. Հարևանները ո՞րտեղից գիտեն...

ԶԱՐՈ. Գիտե՞ն... Անցեալ օր որ ածում էիր, բոլորը դուրս էին եկել պատշգամբ լսում էին... Կիրակի օրը կը գաս, մուրաբա, կանֆէտ կուտենք... Դու շուտ կածես, յետոյ ես էլ պար կը գամ... քեզ համար... հա՛, լա՛...

ՍԱՔԻ. (ժպտալով) Լաւ...

ԶԱՐՈ. (հրճուանքով) Գիտե՞ս, ես քեզ կարող եմ յաղթել (դեռազգեստի վրայով բռնում է Սաքիի երկու թեւերից եւ հրհրում է էս կողմ, էն

կողմ. Սաքին թոյլ է տալիս). տես, տես, ես քեզնից ուժով եմ...

ՍԱՔԻ. (Ցանկարծ խլելով Զարօի թեւերը, կամացուկ ետ է հրում. Զարօն թեթեւակի ճչում, գնում է ետեւ-ետեւ ու քիչ է մնում կպչի Սեղրակի գլխին, որը յանկարծ ընկնում է թախտին մէջքի վրա եւ ծնկները բարձրացնելով ղէմ է տալիս) Քո ուժն էլ էտ է էլի...

ԶԱՐՕ. Վա՛յ, ի՞նչ չարն ես դու... (խլում է փոքը բարձիկը եւ խփելով Սաքիի ուղիղ կրծքին, քրքջալով դուրս է փախչում։ Սաքին բարձիկը դնում է տեղը եւ զարթացած՝ շարունակում է պինդ-պինդ սրբել պիջակը)։

ՍԵԴՐԱԿ. (հեգնական) Ինչ դուրեկան տղայ ես, ա՛ռ... Աղջիկներն էլ քեզ հետ հանաք են անում... Ամա լաւ դրըմփացրեց...

ՍԱՔԻ. Ես էլ մի օր նրան մի լաւ կը դրըմփացնեմ, էն ժամանակը կիմանայ...

ՏԵՍԱՐԱՆ III.

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ ԵՒ ՄՕԹԱԼ

(Ծանը մտնում ու դանդաղ առաջ է գալիս Մօթալը)։

ՍԵԴՐԱԿ. (վեր թռչելով) Ա՜, բարով, բարով, խնամի Մօթալ, ո՞նց ես (խլում է նրա փափախը, դրըմփացնում է յատակին ու հոհոռում։ Մօթալը դոունցքը քաշած յարձակւում է նրա վրա. Սեղրակը փախչում, կծկւում է անկիւնում եւ արմունկը ղէմ տալով, զախեցած) Է, Է, Է, Է...

ՄՕԹԱԼ. (քիչ նայում, դոունցքը հանդարտացած է դերում, փափախը վերցնում ու դնելով գլխին) Խփեմ հիմա շան սատակ անեմ... Լղար թաղի (Սաքիին, որ նայում է ու ծիծաղում) Ամանները տուր... Ի՞նչ բերեմ էսօր։

ՍԱՔԻ (տալով նրան երկու ամաններ) Լաւ քիւֆթա բեր...

ՄՕԹԱԼ. Լաւ (դիմում է ղէպի դուռը)։

ՍԵԴՐԱԿ. (նրա ետեւից) Մի քիչ շատ բեր, ա՛ռ... քո էտ մօթալ փափախդ...

ՄՕԹԱԼ. Եկ, ուզում ես մաիր մեր բօրշի պղինձը, ինչքան կարող ես, լող տուր...

ՍԵԴՐԱԿ. Քո խաղէինդ քեզ մկան կերակուր է ուտեցնում...

ՄՕԹԱԼ. Մ՛ուկ... ես քեզ ցոյց կը տամ... (Մտնում է մի երիտասարդ յանախորդ, Մօթալը ճանապարհ է տալիս եւ ապա դուրս գնում)։

ՏԵՍԱՐԱՆ IV

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴ. (ժպտալով) Բարև... վարպետն էստեղ չէ՞։

ՍԱՔԻ. (ուշադիր) Ոչ, էստեղ չի։

ԵՐԻՏ. Ո՞ւշ կը գայ։

ՍԱՔԻ. Չգիտեմ։

ԵՐԻՏ. Իմ շորերս պատրաստ է, չէ՞...

ՍԱՔԻ. Այո՛։

ԵՐԻՏ. Կը տաս, տանեմ...

ՍԱՔԻ. Ինչու՞ չէ... Դուք որ ասացիք, փաթթել, պատրաստ դրել եմ (հանում է ղեռազգեստի տակից թղթի մէջ փաթթած զգեստը եւ դնում նրա առաջը)։

ՍԵԴՐԱԿ. (յաճախորդի ետեւից դէմքով, ձեռներով է անում Սաքիին եւ անլսելի ձայնով շշնջում է) Փողը, փողը... (Սաքին չի նկատում)։

ԵՐԻՏ. Ես ուրիշ տեղից եմ գալիս, մօտս հիմա փող չունիմ.. մի կէս ժամից յետոյ կը բերեմ... Կարելի՞ է...

ՍԵԴՐԱԿ (շատ անհանգիստ՝ ձեռներով, դէմքով է անում, որ չը տայ)։

ՍԱՔԻ. (անվարան) Կարելի է, ի հարկէ...

ԵՐԻՏ. (սիրալիր) Շնորհակալ եմ, լաւ տղայ. (դնելով ղեռազգեստին սեւ փողերը) Այս քեզ շաղիրդանա... Կէս ժամից յետոյ փողը կը բերեմ... Մնաք բարով։

ՍԱՔԻ. Շատ լաւ. երթաք բարով։

ՍԵԴՐԱԿ. Տօ ախմախ, ո՞ւր ուիր...

ՍԱՔԻ. (զարմացած) Ի՞նչը...

ՍԵԴՐԱԿ. Առանց փողի ո՞ւր ուիր հագուստը...

ՍԱՔԻ. Ի՞նչ կը լինի որ...

ՍԵԴՐԱԿ. Զոռ ու ցաւ կը լինի... Փողը որ չը տայ, ի՞նչ կանես... Դու ճանաչո՞ւմ ես նրան։

ՍԱՔԻ. (քիչ շւարած) Ի՞նչպէս չը տայ. ասաւ կէս ժամից յետոյ կը բերեմ...

ՍԵԴՐԱԿ. Որ չը բերի՞։

ՍԱՔԻ. Ի՞նչպէս թէ չը բերի. բա էն տեսակ մարդը կը խաբէր... Անպատճառ կը բերի։

ՍԵԴՐԱԿ. Քո գլխի արիը գիտենայ... Ուստէն որ հիմա գայ, վայ քեզ... Էսօր մի շալւար էրեցիր, հագուստն առանց փողի ուիր... Իսկ որ յիմար գեղացի ես դու... (ռիթմով) Սաքի, անխելք մաքի... (խլելով ղեռազգեստից սեւ փողերի մի մասը) կէսը լինէ...

ՍԱՔԻ. (վերցնելով մնացած փողը) Էլ ինչու՞ ես խլում. ուզում ես, սա էլ տամ քեզ։

ՍԵԴՐԱԿ. Հարկաւոր չի. ուստին չասես, գիտե՞ս. (շարունակում է կարը քանդել)։

ՍԱՔԻ. (զցում է փողը գուլիկը, վերցնում է խոզանակը որ սրբի, ներս է մտնում զիմնազիստը)։

ՏԵՍԱՐԱՆ V

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ և ԳԻՄՆԱԶԻՍՏ

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (խիստ շտապ) Շալվարս պատրաստ է՞...

ՍԱՔԻ (շփոթւում, ոչինչ չի պատասխանում)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (զոռալով) Ձե՞ս հասկանում, ի՞նչ է... Շալվարս նորոգեցի՞ք... Ո՞րտեղ է վարպետը...

ՍԱՔԻ. Վարպետը... Էստեղ չի...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Ո՞րտեղ է ապա... Շալվարս պատրաստ է, ինձ հարկաւոր է հիմա... (պատ-

զա) Ի՞նչ ես լռում, յիմար, պատասխան տուր։

ՍԵԴՐԱԿ. (օգնությեան գալով) Շալվարը պատրաստ է... պատրաստ է...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Ո՞րտեղ է, դէ տուր տեսնեմ...

ՍԵԴՐԱԿ. Ուստէն էստեղ չի... Բաղնիս է գնացել...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (բարկացած) Գործի էս ժամանակն էլ բաղնի՞ս... Լաւ, ուստէն էստեղ չի, խօ շալվարն էստեղ է...

ՍԱՔԻ. (սիրտ առած) Շալվարն էլ էստեղ չի...

ՍԵԴՐԱԿ. (ձեռքը ղնում է բերնին, հասկացնում է, որ սուս անի)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (Սաքիին) Բա ո՞րտեղ է։... չլինի ուստէն հետը տարել է բաղնիս...

ՍԱՔԻ. Չէ...

ՍԵԴՐԱԿ. (մէջ ընկնելով) Վարպետը շուտով կը գայ։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Ե՞րբ... հինգ բոպէից կը գա՞յ...

ՍԵԴՐԱԿ. Այո՛, այո՛.

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (նայելով ժամացոյցին) Ասա՝ տեղ չգնայ, հինգ բոպէից կը գամ. շալվարն ինձ պէտք է, հասկանո՞ւմ ես...

ՍԵԴՐԱԿ. (խորամանկ) Այո՛, այո՛... (Գիմնազիստն շտապ դուրս է գնում փնթփնթալով։ Դառնալով Սաքիին). Տո, ախմախ մաքի, ո՞ւր ես ասում՝ շալվարը տարել է հետը...

ՍԱՔԻ. (բարկացած) Դէ տարել է, էլի... էս ի՞նչ տեսակ աշխարհ է. հէնց միշտ պէտք է խաբել, խաբել (բարկացած վերցնում է խոզանակն սկսում է քսել)։

ՍԵԴՐԱԿ. (նստելով) Բա՜ս... որ չխաբես, կիմանայ՝ էրել ես և շալվարի գինը կառնի... Գիտե՞ս թէ չէ՞...

ՍԱՔԻ. Թող առնի, ես կը տամ։

ՍԵԴՐԱԿ. (քմծիծաղ) Ո՞րտեղից կը տաս։

ՍԱՔԻ. Շագիրդանաս կը տամ...

ՍԵԴՐԱԿ. (հոհոալով) Տո, անխելք մաքի, շալվարի գինը տասը բուբլի է... (Ներս է մտնում գործակատարը)։

ՏԵՍԱՐԱՆ VI

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐ, յետոյ ԳԻՄՆԱԶԻՍՏԸ և ապա ՍԻՄՈՆԸ

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. Սրբեցի՛ք պիջակս...

ՍԱՔԻ. Այո՛, այ սրբում եմ (սրբում է պինդ)։

ԳՈՐԾԱԿ. Դէ լա՛ւ սրբիր (կռանալով ու մոտից նայելով. պատուզա) Տո, հալա մի սպասիր... (Վերցնելով պիջակը եւ զարմանքով) Էս խօ քրքրել ե՞ս... (Զոռելով աչքերը Սաքիի վրա)։ Հա՜... Էս ի՞նչ ես արել (Ցոյց է տալիս։ Սեդրակը մոտենում ու նայում է)։

ՍԱՔԻ. Դէ ես ի՞նչ գիտեմ. ուստէն ասաւ՝ պինդ քսիր, ես էլ պինդ քսեցի...

ԳՈՐԾԿ. Սա ո՞րտեղից է եկել... Տո՛, սարի արջ, չե՞ս տեսնում, որ կտրտւում է...

ՍԱՔԻ. (բարկացած) Արջը դու՛ ես...

ԳՈՐԾԱԿ. Զէնդ կարիր, ես քեզ ցոյց կը տամ. (ձգելով պիջակը) Ես գինը կը պահանջեմ... Ո՞րտեղ է ուստէն...

ՍԵԴՐԱԿ. Կը գայ շուտով։

ԳՈՐԾԱԿ. (բարկացած ոտը խփելով գետնին) Պիջակս տաս բուբլի արժէ. մի կոպէկ պակաս չեմ վերցնի (շտապ դիմում է դէպի դուռը. այդ միջոցին շատ արագ ներս է մտնում գիմնազիստը. նրանք քիթ-քթի ընդհարւում՝ եւ քիչ ետ-ետ գնալով՝ բռունցքները սեղմում, կարծես իրար վրա են գալիս)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (ղաւելով) Քօռ ես,-ուօ.

ԳՈՐԾԱԿ. Քօռը դու ես։

ԳԻՄՆ. Անկիրթ... (արհամարհանքով ու խէթ նայելով անցնում է նրա առջեւից ու մօտենում է դեռազգեահին)։

ԳՈՐԾԱԿ. (առաջանալով դէպի դուռը) Անկիրթ էլ, յիմար էլ...

ԳԻՄՆ. (հրամայական ղաւելով) Գնա...

ԳՈՐԾԱԿ. (արհամարհանքով) Բերանին նայեցէք (դուրս է գնում)։

ԳԻՄՆԱԶ. (կատաղած) Զեկաւ վարպետը։

ՍԵԴՐԱԿ. Զէ, չեկաւ։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Բա ինչու չեկաւ։

ՍԵԴՐԱԿ. Դէ ես ինչ գիտեմ. չեկաւ էլի...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (ժամացոյցը ցոյց տալով) Յիմար, դու ասացիր, որ հինգ բոպէից կը գայ. անցել է տասը բոպէ։

(Վազելով ներս է մտնում Սիմօնը՝ գլխաբաց։

Գիմնազիստը շուռ է գալիս նրա կողմը)

ՍԻՄՕՆ. (Սաքիին) Ուստէն ասաւ ութօն...

ՍԵԴՐԱԿ. (Գիմնազիստի ետեւից նշաններով նրան լռեցնում է. նա շաւրած նայում է մէկ Սեդրակին, մէկ գիմնազիստին)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (Սիմ՞օնին) Հը՞, ուստէն ինչ... Եկաւ բաղնից (Սաքին ժպտում՝, Սեդրակը քիթը ընում է)։

ՍԻՄՕՆ. (մի կողմ) Ի՞նչ է ասում...

ՍԵԴՐԱԿ. (ձեռքը դնում է ներքին ու հասկացնում՝ է, որ լռի. ապա գիմնազիստին՝ խորամանկ) Ապա, ուստէն շուտով կը գայ... քո ժամացոյցը կարելի է լաւ չի ցոյց տալիս...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Շատ մի խօսիր, յիմար... Շալվարս լինձ հարկաւոր է, հասկանում ես. հիմա պէտք է հագնեմ, տեղ գնամ... (պառզա) Բա ե՞րբ կը գայ ձեր էս վարպետը...

ՍԵԴՐԱԿ. (աղէսաբար) Պարոն գիմնազիստ, մի նեղանայ, կը գայ շուտով, հինգ բոպէից կը գայ... (պառզա... գիմնազիստը անվստահ նայում է այդ խարդախին) Անպատճառ կը գայ...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (կատաղի) Հինգ բոպէից յեռոյ կը գամ. եթէ եկած չլինի, խանութը տակն ու վրա կանեմ (բարկացած դուրս է գնում)։

ՍԵԴՐԱԿ. (Սիմօնին) Տօ, էն շալվարը, որ ուստէն ձեր խանութում կարկանում է, ախր սրանն է... քիչ մնաց բանը բուրդ անէիր...

ՍԻՄՕՆ. Տօ ճիշտ... (քիթը ընում է ծիծաղից) Էն ինչ բաղնիս էր ասում...

ՍԵԴՐԱԿ. (ծիծաղելով) Ախր նրան ասել ենք, որ ուստէն բաղնիս է գնացել... (ծիծաղում են բոլորը)։

ՍԻՄՕՆ. (Սաքիին, որը սրբում է պիջակի այժմ թեները) Տօ, ինչու էրեցիր շալվարը։

ՍԱՔԻ. Ես խօ չէրեցի. ընկել էր ութոյի վրա և էրուել...

ՍԻՄՕՆ. Ա՛յ քեզ տխմար գեղացի...

ՍԵԴՐԱԿ. Իսկ որ տխմար է. էսօր երեք վնաս է տուել. հիմա ուստէն կը գայ և Սաքիի թուքը կը ցամքի...

ՍԻՄՕՆ. (ռիթմով) Սաքի, թուքդ ցամքի...

ԵՐԿՈՒՍՈՎ. (ռիթմով մի-երկու անգամ երգում են՝ ձեռները վեր բարձրացնելով)

Սաքի, Սաքի,
տխմար Մաքի,
ուստէն թակի,
թուքդ ցամքի,
սիրտդ ճաքի ..

ՍԱՔԻ. (կատաղած նետում է նրանց վրա ձեռքի խոզանակը. նրանք կռանում են և չի դիպչում։ Խլում է մկրատը սեղանի վրայից և ընկնում է նրանց ետեւը բղաւելով՝ «դուրս կորէք... դուրս...» Սիմօնն իսկոյն թռչում է փողոց եւ վախելով դռնից ներս է նայում։ Սեղրակը «տո՛, տո՛» բղաւելով մտնում է դեռազգեահի ետեւը, Սաքին՝ նրա ետեւից. Սեղրակն արագութեամբ դեռազգեահի վրայից թռչում է միւս կողմը. Սաքին մկրատը թողնում է դեռազգեահի վրա եւ բարկութիւնից

աչքերում արցունք է երեւում)։ Սպասեցէք դեռ...

ՍԻՄՕՆ. (դրսից) Տօ, ութօն տուէք, ուստէն շուտ ուզում էր, շալվարը պիտի ութոյի...

ՍԵԴՐԱԿ. (վախուկ նայելով Սաքիին, արդուկը եւ արդուկակալը լուռ ծիծաղով տալիս է Սիմօնին։ Ետ գալիս կրկին կարն է քանդում)։

ՍԻՄՕՆ. (դռնից, թափահարելով գլուխը) Վա՛յ, Սաքի—մաքի... (վազում է)։

ՍԱՔԻ. (շարունակում է սրբել).

(Մի-երկու րոպէ լուռ աշխատում են։ Մտնում է մի փոքրիկ տղայ՝ ձեռքին հագուստացու)։

ՏԵՍԱՐԱՆ VII.

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ և ՏՂԱՆ

ՏՂԱՆ. (գլխարկը գլխին. քիչ վախկոտ) Վարպետն էստեղ չի՞...

ՍԱՔԻ. Զէ, ի՞նչ ես ասում...

ՏՂԱՆ. Հայրիկս հագուստացուն ուղարկեց։

ՍԱՔԻ. Բեր էստեղ. (տալիս է)։ Քիչ յետոյ եկ, որ չափդ վեր առնի։

ՏՂԱՆ. Լաւ. (շուտ է գալիս գնալու)։

ՍԵԴՐԱԿ. (շարաճրճի) Ա՛յ տղայ...

ՏՂԱՆ. (ետ նայելով) Ի՞նչ...

ՍԵԴՐԱԿ. Սպասիր... (վեր կենալով)։ Եկ էստեղ, չափդ վեր առնեմ. (տղան կասկածով նայում է։ Սեղրակ բարկացած)։ Ի՞նչ ես կանգնել, մօտ արի... (վերցնում է սանտիմէտրը, երկար-նեղ տետրը ու քանալով դեռազգեահի վրա,

որի մէջ կայ մատիտ)։ **Անունդ ինչ է...** *(տղան լուռ է)* **Շուտ, անունդ ասա։**

ՏՂԱՆ. *(վարանոտ)* **Միսաք...**

ՍԵԴՐԱԿ. *(զրելու պէս անելով)* **Միսաք... լաւ...** *(ղնելով մատիտն ականջի ետեւում, բռնում է տղային ու կանգնեցնում՝)* **Ուղիղ կանգնիր, էսպէս.** *(տղան հնազանդւում է։ Զափում է նախ զօտկատեղը եւ վարժ շրջափաթցնելով սանտիմէտրը մատին ու «քառասուն չորս» ասելով, գնում՝ գրում է տետրում։ Գալիս է ու կրկրզելով տղայի առաջը, կոպիտ կերպով հեռացնում է նրա մի ոտքը միւսից եւ ապա չափելով ոտքի երկայնքը, թեթեւ խփում է ազդրերին. տղան վախեցած վեր է թռչում, Սաքին էլ ծիծաղում է)։* **Մի, վախենայ... Յիսուն ինն...** *(Գնում գրում է տետրի մէջ։ Գալիս բռնում է թեւը, ղնում է կրծքին, չափում՝ ու «յիսունմէկ» ասելով, նորից գնում, գրում է տետրում)։*

ԳԻՄՆԱԶԻՍՏԸ. *(գլուխը դռնից ներս պարզելով բարկացած ու բղաւելով)* **Զեկաւ...**

ՍԵԴՐԱԿ. *(Քիչ մտտենալով)* **Զէ, չեկաւ...** *(աղուէսաբար)* **Հինգ բոպէից համեցէք...**

ԳԻՄՆԱԶԻՍՏ. *(ամուր թքում է շէմքին ու հեռանում)։*

ՍԵԴՐԱԿ. *(ծիծաղելով գալիս ու այս անգամ չափում է տղայի վիզը եւ այնպէս ամուր է սեղմում, որ տղան բղաւում եւ փախչում՝ դուրս։ Սաքին էլ ծիծաղում է։ Այդ բոլորը կատարւում է շատ արագ։ Սեդրակը հրճւանքից ծիծաղելով*

պառկում՝ է թախտին առաջւայ պէս եւ ոտները տնկում՝ է պատին—բարձր։ Ցանկարծ ներս է մտնում վարպետը՝ ձեռքին բրիւկը ծալած եւ նրա ետեւից Սիմոնը՝ արդուկն ու արդուկակալը հետը)։

ՏԵՍԱՐԱՆ VIII.

ՍԱՔԻ, ՍԵԴՐԱԿ, ՎԱՐՊԵՏ, ՍԻՄՈՆ, և յաջորդաբար՝ ԳԻՄՆԱԶԻՍՏԸ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ, ԵՐԻՏԱՍԱՐԴԸ, ԶԱՐՕՆ և ՄՕԹԱԼԸ.

ՎԱՐՊԵՏ. *(Ներս մտնելիս դէմքը բարկացկոտ է. տեսնելով Սեդրակին ոտները ցցած, նետում է շալվարը դեազգեահին, խլում՝ է պատից արշինը եւ «հառամզադա» գոռալով, ընկնում՝ է նրա ետեւից։ Սիմոնը մնում է կանգնած շէմքի վրա հետաքրքիր)։*

ՍԵԴՐԱԿ. *(Ցած է թռչում եւ վազվզելով վարպետի առաջ). Ա՜յ, ա՜յ, ա՜յ, ա՜յ...* *(մտնում՝ է Սաքիի ետեւը)։*

ՎԱՐՊԵՏ. *(շրջկացնելով արշինը, որ կիսովին դիպչում՝ է կծկւած Սաքիին. Սեդրակին չի դիպչում՝)* **Անպիտան, դու երբ պէտք է խելքի գաս...** *(գցելով արշինը թախտի վրա)։* **Մէկը յիմար գիւղացի, միւսը հառամզադա** *(վրդովւած ման է գալիս)։*

ՍԻՄՈՆ. *(վախելով լուռ դնում՝ է արդուկն ու արդուկակալը դեազգեահին եւ շուտ է գալիս գնալու)։*

ՎԱՐՊԵՏ. *(նկատելով դեազգահին բացւած*

տեսրը)։ Տեսրը, էս ո՞վ է բաց արել էստեղ (պառկա։ Բղաւելով Սաքիի վրա) Քեզ եմ հարցնում... (Սիմոնը շէմքի վրա ետ է դառնում ու սկսում է դիտել)։

ՍԱՔԻ. Սեդրակը։

ՎԱՐՊԵՏ. (դիտելով տետրը) Էս ո՞վ է խըզբըզել... քառասուն չորս... յիսունինն... յիսուն մէկ... Էս ի՞նչ բան է... ո՞վ է արել... (Սաքիին) հ՞ը...

ՍԱՔԻ. Մի տղայի չափս է վեր առել...

ՎԱՐՊԵՏ. (շատ քարկացած վերցնում է թախտից արշինը) Տօ, սատանայի ճուտ, էլ օյին մնաց... (աշխատում է խփել, չի աջողում)։

ՍԵԴՐԱԿ. Ա՜յ, ա՜յ, ա՜յ... (անելով եւ քիչ էս ու էն կողմ ընկնելուց յետոյ, ձեռները դէմ տալով, շատ արագ-արագ) Վարպետ, վարպետ, շորերը տուեց տարաւ... շորերը... (Վարպետը կանգնում է) Շորերն առանց փողի տուեց տարաւ... Էն երիտասարդի շորերը... (Վարպետը զարմացած նայում է) Սաքին տուեց, Սաքին...

ՎԱՐՊԵՏ. (նայելով մէկ Սեդրակին, մէկ Սաքիին. վերջը սրան) Հաա, տօ...

ՍԱՔԻ. (գլուխը կախած ու կմկմալով) հիմա փողը կը բերի... ասաւ՝ կէս ժամից կը բերեմ։

ՎԱՐՊԵՏ. (թեւերը թուլացած, արշինը ձեռքից ցած է թողնում. քիչ լռելուց յետոյ ձեռները ծալելով կրծքի վրա ու ծանը) Իսկ եթէ չը բերի...

ՍԱՔԻ. (քիչ լացակումած) Խօ չը խաբեց, կը բերի...

ՎԱՐՊԵՏ. (էլի նոյն դիրքում ու նոյնպէս ծանը) Բան էր, չը բերեց, խօ տասնուհինգ մանէթը կը կորչի... (պառկա։ Ձայնը բարձրացնելով) Տօ, դու եկել ես էստեղ ինձ ֆնա՞ս տալու...

ՍԱՔԻ. (արտասուքի միջից) Եթէ չը բերի, ես կը վճարեմ տասնուհինգ մանէթը...

ՎԱՐՊԵՏ. (քիչ ապշած) Ի՞նչպէս, որտեղից...

ՍԱՔԻ. Իմ շաղիրդանաս էլ կը տամ։

ՎԱՐՊԵՏ. (դառը ծիծաղով գլուխը թափ տալով) Ցիմար գեղացի...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (արագ ներս մտնելով) Պարոն, այս չորս անգամ է, ես գալիս եմ շալվարս տանելու, դուք դեռ նոր էք բաղնից գալիս... (Սեդրակը փոթկացնում է, Վարպետը զարմանում է)։

ՎԱՐՊԵՏ. Ի՞նչ բաղնիս, եղբայր, ի՞նչ բան... Ձեր բրիւկը պատրաստ է, համեցէք (վերցնում ու տալիս է)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (առնելով բրիւկը) Լաւ կաբեցի՛ք (կախում, շուռ-մուռ է տալիս ու տնդղում)։

ՎԱՐՊԵՏ. Էնպէս լաւ եմ դրստել, որ նայելն աւելորդ է... (անհանգիստ դիտում է նրան... պառկա)։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (յանկարծ նկատելով էրուած տեղի կարկատանը, մոտիկ դիտում է եւ զարմացած ու բարկացած) Էս ի՞նչ է, ի՞նչ կարկատան է սա... հա՜...

ՎԱՐՊԵՏ. (խեղճ) Եղբայր, սա ի՞նչ ֆնաս

ունի, ծածկված տեղում է. համ էլ էնպէս է կարված, որ յայտնի չի անում։

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (քարկացած նետելով բրիվը) Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, էս բոպէիս գինը պէտք է վճարես, տասը բուբլուց աւել արժէ... ուրիշ բան չեմ ճանաչում (ձեռները դնում է գրպանն ու կանգնում)։

ՎԱՐՊԵՏ. (Սաքիին խեղճ-խեղճ) Դէ պատասխան տուր, տեսնենք ի՞նչ ես ասում...

ՍԱՔԻ. (արտասուքի միջից քարկացած) Ես կը վճարեմ, շագիրդանաս կը տամ...

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. (արագ ներս մտնելով) Վարպետ, աւել ես՝ ախր էս առէը իմ պիջակս փըչացրել է. (Ցոյց տալով) Նայիր, սա էլ ինչի՞ է պէտք...

ՎԱՐՊԵՏ. (ապշած) Սա ինչու՞ էտպէս արիր...

ՍԱՔԻ. (խռոված) Դու ասացիր պինդ քսի. համ էլ մաշված էր, մի քիչ քսեցի, էտպէս եղաւ...

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. (խիստ) Իմ պիջակս փչացրել էք... Նրա գինը տասը բուբլի է, պէտք է տաք, ես ուրիշ բան չեմ ճանաչում (ծնօտը տընկում ու մտնում է զալիս խանութի մէջ)։

ՎԱՐՊԵՏ. (Սաքիին) Պատասխանը տուր տեսնեմ... Էլի՞ շագիրդանաղ կը տաս...

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ. (մտնելով) Բարև ձեզ, վարպետ. քիչ առաջ հագուստս վերցրի, փող չունէի մօտիս, որ տայի... խնդրեմ ստացէք (գրպանից հանելով ու տալով 15 բուբլի թղթադրամ եւ ա-

սա նայելով Սաքիին) Շատ ազնիւ ու լաւ տղայ է աշակերտդ, վարպետ. (տալով նրան մի արծաթ դրամ) Առ քեզ էլի շագիրդանա, էն անգամին քիչ էր (նկատելով տխրութիւնը) Ինչու՞ է տխուր, Վարպետ, չըլինի՞ նեղացրել էք...

ՎԱՐՊԵՏ. (քիչ շփոթված, փողերը ձեռքի մէջ) Էս երիտասարդների մէկի պիջակն է փչացրել, միւսի բրիւկը. սրանք հիմա կանգնել, գինն ուզում են, նա էլ պիտի տխրի, բա ի՞նչ պիտի անի...

ԵՐԻՏ. Ի՞նչն է փչացրել... մի տեսնեմ...

ՎԱՐՊԵՏ. (ցոյց տալով պիջակն ու բրիւկը) Ահա... Շատ էլ չի փչացել, երիտասարդները եթէ ուզենան, կը դրստենք մի կերպ... Շալվարին ոչինչ չըկայ. պիջակի օձիքն է տրորել, կը փոխենք...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. (տեսնելուց յետոյ) Էսաեղ ի՞նչ կայ որ...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (քիչ կուտրար) Ի՞նչպէս թէ ի՞նչ կայ. եթէ ձեր շալվարն այրէին, էտպէս չէիք խօսի...

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. (միւս կողմից) Եթէ ձեր պիջակն էտ օրին գցէր, էտպէս չէիք գովի էտ սարի առէին...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Մի քիչ լաւ խօսիր, եղբայր, առէս ո՞րն է։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. Լաւ մաւ չեմ իմանում. ես իմ պիջակիս գինն եմ պահանջում...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. Իմ շալվարիս գինն եմ պահանջում։

ՍԱՔԻ. (շատ յուզված արագ դնելով նրանց

առաջ շագիրդանի բուլիկը) Առէք, շագիրդանաս ձեզ եմ տալիս, էլի կը հաւաքեմ կը տամ... կը գնամ հօրիցս կուզեմ...

ԶԱՐՕՆ. (վազելով ու ներս մտնելիս բղաւելով) Հէյ, տանձ, խաղող... (յանկարծ լռում ու զարմացած մնում է կանգնած՝ ձեռներին մի-մի տոպրակ միրգ)։

ՎԱՐՊԵՏ. Ի՞նչ է, աղջի, ինչ ես էտպէս կանչում... էտ ինչ տոպրակներ են...

ԶԱՐՕ. (առաջ գալով) Մեր հարևան տիկինն ուղարկեց, քեռի... Տանձ է, խաղող... Սաքիի համար է... (զարթանալով) Գիտես, քեռի, Սաքին մի երեխայ է ազատել կառքի տակից... Հէնց նոր հարևանը պատմում էր որ երեխան նստած է եղել փողոցի մէջտեղում. հէնց էն բոպէին, որ ձիերը պիտի կոխ տային, Սաքին վազում խլում է երեխային և ազատում (ամենքը զարմացած եւ ուրախացած նայում են մէկ Սաքիին, մէկ Զարօին։ Սիմօնը մօտ է գալիս)։

ՎԱՐՊԵՏ. Աղջի, էտ ե՞րբ...

ԶԱՐՕ. Այսօր, այսօր առաւօտեան...

ՎԱՐՊԵՏ. (Սաքիին) Էդ ի՞նչ ժամանակ։

ՍԱՔԻ. (ամաչելով) Որ ուղարկեցիր թել առնելու...

ԶԱՐՕ. Գիտէս, քեռի, հարևանն ասում էր, որ մի լաւ ընծայ է տալու...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Արժէ, արժէ, ապրի Սաքին... Հա, վարպետ, չարժէ...

ՎԱՐՊԵՏ. Արժէ, արժէ. ապրես, Սաքի, ապրես. էս մէկը բոլոր յանցանքներիդ արժեց...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Հապա, վարպետ. ես քեզ ասում եմ, որ լաւ աշակերտ ունես, մարդ կը դառնայ...

ԶԱՐՕ. Գիտէք պարոն, Սաքին էնպէս լաւ շուի է ածում, երգում է... Սարերի մասին որ պատմում է, մարդու սիրտն ուզում է խկոյն գնայ էն սարերը տեսնի, ման գայ...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. (գիմնազիստին եւ զորձակատարին) Հը՞, դուք ի՞նչ կասէք։ Տօ մի երեխայ է ազատել, է...

ԳԻՄՆԱԶԻՍՏ. (վճռական) Տուէք իմ շալվարը. ինչասը բաշխում եմ էտ տղային. (վերցնում է շալվարը)։

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. Ես էլ, ախպէր. ես էլ իմ պիջակիս ինչասն եմ բաշխում... Ամա էսօր ես ոնրան եմ ասել առչ, նա էլ ինձ է ասել. էտ ո՞չինչ... Քէֆ արա, լաւ տղայ... (վերցնում է պիջակը)։

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Բրաւօ, բրաւօ... (բոլորը զարթանում են։ Այդ միջոցին ներս է մտնում Մօթալը եւ դնում է դեռազգեստին երկու պնակ կիրակուր. նրա տրամադրութիւնը լաւ է)։

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Էտ ինչ բերիր, այ տղայ...

ՄՕԹԱԼ. Կերակուր է, աշակերտների համար... Ամա քիւֆթա եմ ասում հա...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. Ահա, էս էլ ճաշը. հիմա լաւ կուտեն կուրախանան (առաջ քաշելով միրգի տոպրակները). Ահա սա էլ միրգը, բօլ տանձ ու խաղող... Քէֆ. ապա... (տալով Սիմօնին փող

ժիլետի զրպանից) Գնա էս էլ իմ հաշուին մի քանի շիշ քաղցր լիմոնադ բեր... շուտ... *(Սիմոնը վազում է)։*

ՄՕԹԱԼ. Էս ինչ խաբար է...

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ. *(Մօթալին)* Դու սիրուն պարել գիտես. ապա մի էստեղ պարՔս Սաքիի համար. նա մի երեխայ է ազատել կառքի տակից...

ՄՕԹԱԼ. Դրուստ. տղայ եմ ասում է... կը պարեմ, ոնց չեմ պարի... Սաքին ամենից լաւ տղան է, ոչ ոքի իր օրում մի վատ խօսք չի ասի... *(նայելով Սեղրակի կողմը)* Ամա էս մէկը շատ փուչն է *(ծիծաղ)*...

ԵՐԻՏԱՍԱՐԴ. *(առաջ քաշելով գլուխը կախած Սեղրակին)* Հա, սա միքիչ չարաճըճին է երևում, ամա լաւ է, աչքաբաց է... Ապա մի քէֆ. դէ տաշի, պարիր տեսնենք...

ՄՕԹԱԼ. Հէ, ճամփա *(փռելով թեւերը, ուրախ սկսում է պարը. միւսները տեղ են բաց անում)։*

ԲՈԼՈՐԸ. *(ուրախ տաշի են խփում՝ ոմանք դեազգեահին, ոմանք ծափ։ Դռան առաջ կուտուտում են հետաքրքիրները—կին, երեխայ, տղամարդ. միքանիսը մինչեւ իսկ ներս են մտնում։ Քիչ անց՝ հեւալով մտնում է Սիմօնը՝ ձեռքին լիմօնադի շորս շշեր քարձր քոնած, ճեղքում է կանգնածներին, ըղաւելով «խաբարդա»։ Մօթալը պարում է զեղեցիկ։ Հանդարտ իջնում է վարագոյրը...)։*

ՀԱՍԿԵՐ ԱՄՍԱԳՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

1. Ստ. Լիսիցեան. Պահմըտոցիկ	5 կ.
Ստ. Լիսիցեան. Ազատութիւն	5 »
2. Սէյրի. Նոր վարժուհին	5 »
3. Սէյրի, Ես իշխան եմ	5 »
4. Ստ. Լիսիցեան. Գաղտնիք	5 »
5. Ժորժիկ Մանուէլեան. Փնթի	5 »
Գ. Շահ-Պարոն. Գող—սիրաը դող	5 »
6. Տիկ. Մարգարիտ. Դասարանում	5 »
7. Յ. Քեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին . .	5 »
8. Գլազունով. Տիկին Սիրան, փ. Կ. Միրիանեան	5 »
9. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ.	8 »
10. Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ	12 »
11. Փէրրօ. Տօնի համար	10 »

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Р.С.Ф.С.Р. Публичная Библиотека
7/XI—1922
Ачарян А. Мясникиана
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«ՀԱՍԿԵՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օր գետնի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 կ.
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամբորդներ . . . . . 25 »
4. Ա.Թ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիէս . . . 8 »
6. Ռ. Պատկանեան, Զախու . . . . . 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Բեռի Մկо . . . . . 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու դիսասաղը . . . . . 12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ. . . . . 12 »
11. Իւանովիչ. Աւօենց Ստեփանը. . . . . 20 »
12. Կ. Լուկաշևիչ. Ծաղիկների մէջ. . . . . 12 »
13. Ա.Թ. Խնկոյեան. Աղէսն ու արջը. . . . . 20 »
14. Նիկ. Սարգսեան. Կենդանիների դոյները . . 15 »
15. Բրեհ Հարտ. Մլիս. . . . . 12 »
16. Է. Սիտոն-Տօմպսոն Կախականջիկը. . . . . 12 »
17. Գ. Շեաբ. Արագոնաւորդները. . . . . 25 »
18. Ա.Թ. Խնկոյեան. Պապն ու շաղգամը . . . . 12 »
19. Կար. Միրիանեան. Մայրը . . . . . 12 »
20. Յովհ. Թումանեան. Բէֆ անողին քէֆ չի պակսիլ. 20 »
21. Պուշկին. Բնած գժխուհին . . . . . 20 »
22. Ն. Սարգսեան. Թէ ինչու համար է ծաղիկը 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածւում սերմերը . 20 »
24. Կարլ Էւալդ. Տաներկու քոյր. . . . . 10 »
25. Ֆէլրս. Տօնի համար . . . . . .
26. Ա.Թ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . . . 10 »
27. Ա.Թ. Խնկոյեան. Աղէսն ու Կռունկը. . . . . 10 »
28. Մամին-Սիբիրեակ. Ծեր ճնճղուկը, Ճիճու, Պառաւ Մուռանի խոստովանքը . . . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մաարդն ու Նամարդը 10 »
30. Ա.Թ. Խնկոյեան. Ծիտն ու Որբերը . . . . . 5 »
31. Էրնստ Սէտոն-Տօմպսոն. Կաղլիկ քոթոթը . . 20 »
32. Կ. Մ. Ստանիւկովիչ. Դայեակը . . . . . 20 »

Ընտանեկան դաստիարակութեան վերաբերեալ

1. Երեխայի կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը—Հենրիկ Վերնիցի, թարգ. Ստ. Լիսիցեանի։ 25 կ.
2. Երեխայի քունը —Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի։ 15 կ.
3. Երեխայի ազատագրութիւնը—Կ. Հ. Վենտցելի։ Մեծերն ու փոքրերը—տիկ. Իսահակսէնի. թարգմ. Ստ. Լիսիցեանի։ 15 կ.
4. Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը—Կ. Ելնիցկու, թարգմ. Մ. Աղ. և Ստ. Լ. 15 կ.
5. Պարգևներն ու պատիժները ընտանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
6. Որտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թովչեանի։ Ծանօթացրէք կեանքի ծագման հետ—տիկ. Սելմերի թարգմ. Ստ. Լ. 15 կ.
7. Ընտան. դաստիարակութեան նպատակները և հիմունքները—Պ. Կապտերևի, թարգմ. Միս. Աս. 15 կ.
8. Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—Ակսել Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի։ 15 կ.
9. Մանուկների աշխատանքը ընտանիքում.—Ակսել Արստանի, թարգմ. Մ. Ասլիհանցի։ 15 կ.
10. Տղան և աղջիկը անցողական շրջանում—Բուլի և Նելսէնի, թարգմ. Ստ. Լիսիցեանի։ 10 կ.
11. Մանկական ազատութիւնն ու ուրախութիւնը—Օտտօ Էրնստի, թարգմ. Լ. Բաբայեանի։ 20 կ.
12. Ժողովրդական մանկական խաղեր, խմբագրեց Ստ. Լիսիցեան։ 20 կ.

13. Ընտանեկան յարաբերութիւններն ու նրանց կրթիչ նշանակութիւնը—Ա. Ն. Օստրոգորսկու, թարգ. Լ. Շ.: 20 կ.

14.—15 Մանկան հոգին — պրոֆ. Սիկորսկու, թարգմ. Միս. Ա. և Ստ. Լիսիցեանի: 45 կ.

16. Ժառանգականութիւնը և դաստիարակութիւնը—Ռուդոլֆ Լեմանի թարգմ. Լ. Բաբայեանի: 15 կ.

17. Դաստիարակութեան իդէալները, Ռուդոլֆ Լեմանի: —. Մանկան հոգեկան կեանքի զարգացումը, թարգմ. Լ. Բաբայեանի: 20 կ.

18 Ընտանեկան թատրոն—Վ. Բ. թարգմ. Միս. Ասիլեանի: 20 կ.

19. Մանուկը բնութեան մէջ. — Ա. Արստալի. թարգմ. Մ. Ասիլեանի 15 կ.

20. Մանկան ծիծաղը—Վ. Ռուդակովի

21. Բարոյագիտութեան դասաւանդումը— պրոֆ. Լ. Սոլաժի:—15 կ.

22. Երեխաների կապրիզներն ու դիւրագրգռութիւնը.—Ն. Կարցովի թարգմ. Մ. Սահակեան: 20 կ.

23—24 Երկիւղն ու անվեհերութիւնը սկզբնական դաստիարակութեան մէջ—Կապտերևի, թարգմ. Մ. Ասիլեանի: 50 կ.

ԱՄԲՈՂՋ ՇԱՐԻ ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Ճանապարհածախսը՝ 1 ռուբլուց ոչ պակաս գնողների համար խմբագրութեան վրա է.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аскеръ», կամ պահեստին՝ Книготорговля „Гиръ“.

«ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»

խմբի հրատարակութիւնները

1. Վայրի կարապներ (սպառուած) . . 8
2. Առաջին վիշտ (սպառուած) . . . 10
3. Անտառապահը (սպառուած) . . . 12
4. Աշխէնն ու Մարգարիտը (սպառ.) . . 10
5. Աղքատի բաղդը (սպառուած) . . . 5
6. Գոհարիկն ու Աստղիկը (սպառուած) . . 10
7. Նելլոնն ու Պատրաշը (սպառ.) . . . 10
8. Գիւղում (սպառուած) 20
9. Կենդանի՞ է արդեօք (սպառուած) . . 8
10. Բարեկամներ (սպառուած). . . . 12
11. Առակներ բնական պատմութիւնից (սպառ.) . 12
12. Մագնիս 12
13. Արջի պատմութիւնը. 15
14. Ողնիներ 8
15. Թմփլիկը (սպառուած) 12
16. Լեռան աղջիկը (սպառուած) . . . 20
17. Բու 12
18. Փոքրիկ Պարոյրի արկածները . . . 15
19. Փիղ 8
20. Ռուբէնի զբաղմունքը 25
21. Որբ Աննան . . . . , . 12
22. Արցունք 15
23. Անձնազոհ մանուկ 10
24. Դարևոր կաղնի 6
25. Խրամատի եղերքին 10
26. Լուսատտիկներ 40

27. Կատակերգութիւն գոմի բակում. . . 12
28. Նոր մայրիկս 10
29. Բախտը ինչ ուզեմ էր 8
30. Եօկին և Եակին 5
31. Փոքրիկ Լևոնի դաղտնիքը 7
32. Կարլ Լինեյ 20
33. Յիսուսի տօնածառը։ 10
Մարգարտածաղիկն ու արտուտը . . . 15
34. Փոքրիկ Հարրիի պարտէզը 10
35. Արքայադուստրն ու Թզուկը 10
36. Գեղեցիկ Նիւերնեզա 10
37. Աստղամանուկ 30
38. Զանկնդների ընտանիքը 5
39. Առաջին հիասթափութիւն 10
40. Աղքատ դպրոցականը 20
41. Լալին և իւր շնիկը . . . . .

Դիմել պահեստին՝ «Գիր» գրավաճառանոցին— Тифлисъ, книготорговля „Гиръ“, կամ Редакція „Аскеръ“ (Нверъ манукнеринъ):

„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Դատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ. Խնկոյեանի . . . . . 25 կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վոդեւիլ. 10 կ.

4252

0008313

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008313